ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԳՊՀ գիտական խորհրդի 2021թ.
դեկտեմբերի 18-ի թիվ 15
նիստում
Ռեկտոր՝ Ռ. Հակոբյան

«18» դեկտեմբեր 2021թ.

Գավառի պետական համալսարանում կուրսային աշխատանքների կազմակերպման, կատարման և գնահատման կանոնակարգ

I. Ընդհանուր դրույթներ

1. Կուրսային աշխատանքն ուսանողի ուսումնական աշխատանքի տեսակներից մեկն է, որը կատարվում է Գավառի պետական համալսարանում /այսուհետ՝ Համալսարան/ գործող մասնագիտության ուսումնական պլանին համապատասխան և պարտադիր է բոլոր ուսանողների համար:
2. Կուրսային աշխատանքի իրականացման նպատակներն են՝
   ա/ նպաստել ուսանողների մասնագիտական գիտելիքների և կարողությունների խորացմանը,
   բ/ ձևավորել ինքնուրույն հետազոտական աշխատանքներ կատարելու ունակություններ,
   գ/ զարգացնել մասնագիտական, տեղեկատվական նյութերի մշակման, վերլուծության և օգտագործման կարողությունները, ինչպես նաև՝ տեղեկատվական-որոնողական հարթակներում զանազան գործիքակազմեր կիրառելու ունակությունները,
   դ/ ձևավորել ուսումնասիրության արդյունքների վերլուծության և մեկնաբանման, ստացված արդյունքների հիման վրա եզրակացություններ ձևակերպելու և առաջարկություններ ներկայացնելու կարողություններ,
   ե/ նպաստել հետագայում ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի նախապատրաստման և ներկայացման համար անհրաժեշտ փորձի ձեռքբերմանը:

II. Կուրսային աշխատանքի թեմայի ընտրությունը և ղեկավարի նշանակումը

2.Կուրսային աշխատանքները կատարվում են համապատասխան մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված մասնագիտական առարկաներից:
3. Կուրսային աշխատանքների թեմաները առաջադրվում և արդիականացվում ու համալրվում են ամբիոնի դասախոսների կողմից՝ յուրաքանչյուր տարի, քննարկվում և հաստատվում են ամբիոնների նիստերում:

4. Կուրսային աշխատանքի թեմաները պետք է համապատասխանեն տվյալ դասընթացի առարկայական ծրագրին և նպաստեն կրթական վերջնարդյունքների ձեռքբերմանը:
5. Կուրսային աշխատանքների թեմաների թիվը պետք է գերազանցի համապատասխան կուրսի ուսանողների ընդհանուր թվին:
6. Կուրսային աշխատանքի թեման ընտրում է ուսանողը:
7. Կուրսային աշխատանքի ղեկավար է նշանակվում ամբիոնի դասախոսներից, ով ունի ոչ պակաս, քան 3 տարվա գիտամանկավարժական (գիտահետազոտական) աշխատանքային փորձ: Կուրսային աշխատանքի ղեկավարը, համաձայն իր կողմից առաջարկված թեմաների բովանդակության, հանձնարարում է ուսանողին հետազոտման ենթակա պարտադիր գրականությունը, ձևակերպում առաջադրանքը և օգնում կազմել աշխատանքի կառուցվածքային պլանը **/Տե՛ս Հավելված 1, Հավելված 2/:** Ղեկավարն անցկացնում է խորհրդատվություններ, ստուգում կուրսային աշխատանքի կատարման ընթացքը, ապա ստուգում և գնահատում ներկայացված աշխատանքը:
8. Կուրսային աշխատանքների կատարման գործընթացը գտնվում է ամբիոնի վարիչի հսկողության տակ և, ըստ անհրաժեշտության կարող է քննարկվել ամբիոնի ընթացիկ նիստերում:

III. Կուրսային աշխատանքի ձևավորմանը ներկայացվող պահանջները

9. Կուրսային աշխատանքը ներկայացվում է համակարգչային շարվածքով՝ տպագիր տարբերակով /«GHEA Grapalat» տառատեսակով /: Թղթի չափսը՝ A4 (210 մմ x 297 մմ), լուսանցքները՝ ձախից 3.0 սմ, աջից՝ 1.5 սմ, վերևից՝ 2.0 սմ և ներքևից՝ 2.5 սմ: Նյութը տպվում է թերթի միայն մեկ երեսին:
10. Վերնագրերը շարվում են 14 pt տառաչափով, իսկ տեքստը՝ 12 pt, միջտողային հեռավորությունը՝ 1.5: Գլուխների վերնագրերը գրվում են թավ (bold) և գլխատառերով: Յուրաքանչյուր գլուխ սկսվում է նոր էջից: Պարբերությունները հավասարեցվում են երկու կողմերից, սկսվում են 1 սմ խորքից: Աշխատանքի բոլոր էջերը համարակալվում են ներքևում՝ կենտրոնում: Համարակալումը սկսվում է բովանդակությունից, որը համարվում է 2-րդ էջ:
11. Աշխատանքում առկա աղյուսակները, նկարներն ու գծապատկերները և այլն համարակալվում են, և դրանց տրվում են անվանումներ (անհրաժեշտության դեպքում տրվում են նաև ծանոթագրություններ): Նկարների, գծապատկերների, գծագրերի անվանումները, նշանակումների բացատրությունները գրվում են դրանց ներքևում, մեջտեղում՝ 10 pt տառաչափով: Աղյուսակների անվանումները գրվում են դրանց վերևում, իսկ հավելվածներինը՝ նոր էջի վերին աջ անկյունում:
12. Աշխատանքի վերջում տրվում է օգտագործված գրականության ցանկը, որը ներկայացվում է բնագրի լեզվով: Նախ նշվում են հեղինակ(ներ)ի ազգանուն(ներ)ը և անվան սկզբնատառ(եր)ը, այնուհետև նյութի՝ գրքի կամ հոդվածի ամբողջական անվանումը, ամսագրի լրիվ կամ ընդունված կրճատ անվանումը, հրատարակման վայրը, հրատարակչությունը, հրատարակման թվականը, հատորի և թողարկման համարները, հերթական համարը, էջերը, որտեղից հիմնականում օգտվել է կամ գրքի էջերի ընդհանուր քանակը: Համացանցում տեղադրված նյութերի դեպքում

կիրառվում են նույն սկզբունքները՝ վերջում նշելով համապատասխան նյութի հղման հասցեն և ծանոթանալու ամսաթիվը: Մեջբերումները կատարվում են համակարգչային հղման ձևով՝ տողատակերում նշելով հեղինակի (հեղինակների) ազգանունը, անվան սկզբնատառը, մեջբերվող աղբյուրը (աշխատությունը՝ մենագրություն, դասագիրք, ձեռնարկ, ուղեցույց, կամ նորմատիվ իրավական ակտը, կամ համացանցային աղբյուրը), հրատարակման վայրը, տարեթիվը, էջը:
13. Աշխատանքի նվազագույն ծավալը պետք է կազմի 15, առավելագույնը՝ 20 էջ:

IV. Կուրսային աշխատանքի պաշտպանությունը և գնահատումը

14. Ավարտված աշխատանքը քննաշրջանից 2 շաբաթ առաջ ներկայացվում է ղեկավարին՝ վերջնական ստուգման համար:
15. Ղեկավարը ստուգում է կուրսային աշխատանքը և սահմանված պահանջներին համապատասխանող աշխատանքը երաշխավորում է պաշտպանության՝ տալով համապատասխան գրավոր եզրակացություն (կարծիք) **/ Տե՛ս Հավելված 3./:**
Կարծիքը ներկայացնելիս հաշվի է առնվում.
ա) աշխատանքի բովանդակության համապատասխանությունը ուսանողի ընտրած թեմային,
բ) տվյալ թեմային վերաբերող տեսական և գործնական նյութերի ուսումնասիրության, վերլուծության և օգտագործման մակարդակը,
գ) ուսանողի՝ մասնագիտական տերմինաբանության ճիշտ օգտագործման և հետազոտության մեթոդների կիրառման իմացության մակարդակը,
դ) եզրակացությունների հիմնավորումը, փաստարկված առաջարկությունների ներկայացումը, ուսանողի դատողությունների ինքնուրույնությունը,
ե) աշխատանքի ձևակերպման պահանջների պահպանումը:
16. Սահմանված բովանդակային և (կամ) տեխնիկական պահանջներին չհամապատասխանող աշխատանքները հետ են վերադարձվում հետագա լրամշակման՝ հաշվի առնելով ղեկավարի կամ ամբիոնի դիտողությունները:
17. Կուրսային աշխատանքի պաշտպանության համար ամբիոնում կարող է ստեղծվել աշխատանքային մասնագիտական հանձնաժողով՝ 2-3 դասախոսի մասնակցությամբ: Պաշտպանությունն անցկացվում է ուսանողական խմբի մասնակցությամբ՝ առկա կամ առցանց ձևաչափերով:
18. Կուրսային աշխատանքի բովանդակությունը ներկայացնելու համար ուսանողին տրվում է 10-15 րոպե ժամանակ: Ուսանողը պաշտպանության ժամանակ պետք է պատրաստ լինի.
ա) ներկայացնելու աշխատանքի հիմնական բովանդակությունը,
բ) բացատրելու աշխատանքի առանձին՝ կարևոր խնդիրները,
գ) պատասխանելու աշխատանքին վերաբերող հարցերին:
19. Կուրսային աշխատանքը գնահատվում է՝ համաձայն Համալսարանի կողմից հաստատված գնահատման սանդղակի և **Հավելված 4-ի:**
20. Սահմանված ժամկետներում կուրսային աշխատանքը չներկայացնելը կամ չպաշտպանելը համարվում է ակադեմիական պարտք:

21. Կուրսային աշխատանքների պաշտպանության արդյունքները կարող են քննարկվել ամբիոնի նիստում կամ ֆակուլտետի խորհրդում:
22. Կուրսային աշխատանքները պահվում են ամբիոնում մինչև ուսանողի հաջորդ կուրս փոխադրվելը, այնուհետ՝ Համալսարանի արխիվում, միչև ուսանողի բուհն ավարտելը:

Հավելված 1.

Կուրսային աշխատանքի կառուցվածքային պլան

Հ/հ	**Կառուցվածքը**	**Ներկայացվող պահանջները**
1.	Տիտղոսաթերթ	Տես՝ **Հավելված 2-ը:**
2.	Բովանդակություն	Ներկայացվում են աշխատանքի բոլոր բաժինները, գլուխները (ենթագլուխները), դրանց համապատասխան էջերը, ինչպես նաև հավելվածները (առկայության դեպքում), որոնք կցվում են աշխատանքին: Բոլոր գլուխների և ենթագլուխների անվանումները պետք է գրված լինեն այն ձևակերպմամբ և հերթականությամբ, որոնցով դրանք ներկայացվել են կուրսային աշխատանքի հիմնական մասում:
3.	Ներածություն	Ներածությունը աշխատանքի առաջին՝ սեղմ մասն է, որի ծավալը չպետք է գերազանցի 2 էջը: Այս բաժնում պետք է հիմնավորվի թեմայի արդիականությունը, ներկայացվեն թեմայի ուսումնասիրության առարկան, նպատակը, խնդիրները, ինչպես նաև տեսական և/կամ կիրառական նշանակությանն առնչվող հարցերը:
4.	Հիմնական մաս	Աշխատանքի հիմնական մասը պետք է բաղկացած լինի 2-3 գլխից (կարող են լինել նաև ենթագլուխներ): Այն ներառում է հետազոտության նկարագրությունը, օգտագործված գրականության և ուսումնասիրվող խնդրի վերլուծությունը, կիրառված մեթոդներով կատարված ուսումնասիրության արդյունքների շարադրումը և վերլուծությունը:
5.	Եզրակացություն (աշխատանքի եզրափակիչ մաս կամ ամփոփում)	Եզրակացության մեջ ամփոփվում են աշխատանքի արդյունքները, ներկայացվում ուսանողի եզրահանգումները: Կարող են ներկայացվել նաև առաջարկություններ:
6.	Օգտագործված գրականության ցանկ	Ներկայացվում են աշխատանքի մեջ օգտագործված գրականության ցանկը, նորմատիվ իրավական ակտերը, վիճակագրության աղբյուրները և էլեկտրոնային աղբյուրների հղումները:
7.	Հապավումների, պայմանական նշանակումների, եզրույթների /տերմինների/ ցուցակ, հավելվածներ:	Տրվում է աշխատանքում օգտագործված հապավումների, պայմանական նշանակումների և եզրույթների ցուցակը, առկայության դեպքում՝ հավելվածները:

Հավելված 2.

Կուրսային աշխատանքի տիտղոսաթերթ

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

_____

(*ֆակուլտետի անվանումը*)

_____

(*մասնագիտության անվանումը)*

_____

(ամբիոնի անվանումը)

ԿՈՒՐՍԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

_____առարկայից

_____թեմայով

Կատարող՝ բակալավրիատի ….. կուրսի ուսանող

_____ _____

(ուսանողի անուն, ազգանուն) (ստորագրություն)

Գիտական ղեկավար՝ _____

(ազգանուն, անուն, գիտական աստիճան, կոչում)

Նշում՝ պաշտպանությունը թույլատրելու (չթույլատրելու) մասին _____

«_____»_____202….թ. _____ (ղեկավարի ստորագրությունը)

Գավառ - 202. . .

Հավելված 3.

Կուրսային աշխատանքի ղեկավարի կարծիք

Ֆակուլտետ_____
Մասնագիտություն_____
Կուրս _____
Ուսանող_____
(անուն, ազգանուն)
Կուրսային աշխատանք_____ առարկայից
_____ թեմայով
Թույլատրված է պաշտպանության "___" _____202…
Պաշտպանության ժամկետը "____" _____ 202… թ.
Նշումներ աշխատանքի վերաբերյալ՝ ուսանողի կողմից արված եզրակացությունների և առաջարկությունների որակի, դրանց կատարման ինքնուրույնության ապահովման նշումներով
_____
_____
_____
_____
Ղեկավար՝ _____
(անուն, ազգանուն) (ստորագրություն)

Հավելված 4.

Կուրսային աշխատանքի գնահատման չափանիշները

Հ/հ	*Կուրսային աշխատանքի գնահատման չափանիշները*	*Միավորը*
1.	Բովանդակության ամբողջականությունը /աշխատանքի հիմնական մասում թեմայի ներկայացման լիարժեքությունը, ուսումնասիրության հիմնավորվածությունը/	20
2 .	Կատարման ինքնուրույնությունը /դատողությունների, եզրահանգումների ինքնուրույնությունը/	15
3 .	Ձևակերպման որակը /աշխատանքի տրամաբանական կառուցվածքը, գրագետ շարադրանքը, տեխնիկական պահանջների պահպանումը/	25
4 .	Ներկայացման ձևը և պաշտպանության որակը /աշխատանքի հիմնական դրույթները հստակ ներկայացնելու, հարցերին սպառիչ պատասխանելու կարողությունները/	40
Ընդամենը		**100**